

## ՀԱՅՆ ՈՒ ԻՐ ԴԵՐՆ

Ներկայ յօդուածը մեր հմուտ աշխատակցէն խնդրած է « զրգերութագւառոր » Ձէյս Կարլատոն Եռւնգ, որ ամէն լեզուէ գրգերու եւ զանազան գրադէաներու ձեռադրաց ճոխ հաւաքածու մը կը կազմէ Սմերիկայի մէջ :

Ծ. Խ.

Արեւմտեան Ասիան իր աշխարհագրական դիրքով եղած է ճանապարհ անցուդարձից աշխարհակալաց, ու իր երկրի բերրութեան ազագաւ՝ պատճառ նախանձու գրացի մեծագօր աէրութեանց, որով եւ անդ աճող բազմաթիւ ու բազմազան փոքր ազգութիւններն ու իշխանութիւններն այս շարունակակատն ոտնակոյիսութեանց եւ հարուածանաց հետեւանօք տկարանալով՝ ժամանակաւոր գոյութիւն եւ փայլ մը միայն կրցած են ունենալ : Արդարեւ, ո՞ւր են աննկուն Մարք, ճոխ ու գիտուն Ասորաբարելացիք, ճարտար ու վաճառաշահ Փիւնիկեցիք, քաջամարտիկ Քիթացիք, Փոքր Ասիոյ եռուղին փոքր ազինք՝ Փուրեցիք, Լիւղիացիք, Բիւթանիացիք, Պաֆլակոնիացիք, Պոնտացիք, Ալանք, Աղուանք եւ այլք . այդ ամէն ազգութիւնք ցրուած, ու այլ ժողովրդոց հետ խառնուած, ի մի բան իրը ազգ իրենց գոյութեան իրաւոնքն կորսընցուցած ու անհետացած են, եւ անոնցմէ միայն Հայն կայ ու կը մընայ, կառչած աւագ մեծամասնութեամբ իր մայր հայրենեաց, խօսելով իրենց նախանարց բարբառն, պահելով իրենց առհմային պատմութիւնն ու աւանդութիւններն եւ սրաիւ յարեալ իրենց ազգային նախնական եկեղեցւոյն . եւ այս ամէն՝ շնորհիւ իր բարոյական յատկութեանց ու ժին, այսինքն հայրենասիրութեան, ազգասիրութեան, քաջութեան, աշխատասիրութեան, չարքաշութեան, խնայողութեան եւ ընտանեկան յարկի սրբութեան նախանձախնդրութեան, որով եւ տնկուն ազգ կոչուած է ի պատմագրաց :

Քրիստոնէական տեսակետով մեծ դեր մը կատարած է Հայն . ոչ միայն ի ձևոն Տրդատայ արքային եւ Սրբոյն Գրիդորի շուրջ տասն աարիներ յառաջ քան Մհծն Կոստանդիանոս առաջին անդամ (303) Յիսուսի կրօնն պաշտօնապէս ընդունող ազգն եղած է . այլ եւ նազովրեցւոյն վարդապետութիւնն անդ այնչափ զօրացած է որ այդ երկիրն եղած է մի զօրաւոր թումբ Արեւելքի Մազդէականութեան եւ Հարաւի Խալամութեան դէմ : Արդարեւ՝ առաջինն քանիցս անոր ընդհարելով կը փշրուի . ու չկրնալով յերեւմուստ ընթանալ՝ աեղական կը մնայ . խոկ երկրորդն քանիցս բազխուելէ եաք՝ կը հարկացրուի Եգիպտասէն անցնելով ու Պիրպերիոյ ծովելքն քերելով ձիպրալթարի ճամբով Եւրոպա մտնել : Ասիոյ

այս միակ կարեւոր քրիստոնեայ ազգն պաշտպան կանգնած է դրացի փոքր քոյր եկեղեցիներու , ու միջին դարուն իրը առաջնորդ ու օժանդակ ծառայած է Արեւմուտքի Խաչակրաց , Սր. Երկիրն աղատադրելու գործոյն մէջ , եւ որոյ հետեւանօք վրայ տուած է իր Կիլիկիեան թագաւորութիւնն : Իրը քրիստոնեայ իր այս դերն արժանի ըրած է զայն բազմաց կողմանէ Նահատակ ազգ անուանման :

Հայն որ երբեմն Աթէնքի՝ Պրոյերէսիոս մը տուած է , որ Հռովմի մէջ Աստուած ճարտասանութեան անուանուեցաւ ու մասնաւոր անդրիներով պատուուեցաւ , եւ Հռովմի՝ Ներսէսի նման հիւպատոսներ եւ յառաջապահաց քաջամարտիկ գունդեր տուած է , ու ապա Բիւզանդիոնի Ակի չափ հզօր ու մեծանուն կայսրեր պարզեւոծ է , առանց 'ի հաշիւ առնելու շուրջ 20 ականաւոր զօրավարներն , իր ուրոյն իշխանութիւնն կորսնցնելէ ետք՝ երբ զաւակաց մի մասն կը հարկադրուի հեռանալ հայրենի երկրէն , կը ներկայանայ իրը նշանաւոր պատերազմիկ , դիւանագէտ , եւ վաճառաշահ ոչ միայն դրացի Պարսից , Հագարացւոց եւ Եգիպտացւոց աշխարհներն , այլ եւ 'ի Հնդիկու , 'ի Փիրմանիա , 'ի Ճ'ավա , յիտալիա , 'ի Լեհս , յՈւլահիա , 'ի Թրանսիլվանիա , եւ հուևկ ուրեմն եւ իր բնագաւառի տիրող կառավարութեանց մէջ 'ի Թուրքիա եւ 'ի Ռուսիա . ուստի եւ իրաւամբ այս ազգն Արեւելքի յաղախակրիչ աւարքն յորջորջուած է :

Այս հինաւուրց ազգն որ այսօր շուրջ 40 դարերու պատմութիւնն ունի . եւ տոկուն . նահատակ ու յաղախակրիչ տիտղոսներով յիշատակուած է . արժանի է արդարեւ որ իր զաւակաց գրական արտադրութիւններով ներկայանայ 'ի չարս Ի. -րդ լուսոյ դարու զարգացեալ ազգաց մտային գլուխ գործոցներու յատուկ հոյակապ մատենադարանին մէջ՝ զոր կանգնելու մեծ գործին ձեռնարկած է մարդկութեան մեծանուն բարերարն՝ գրքերութագաւորն՝ Ճէյմս Քառլթոն Եռնկ . 'ի Մինեզոթս , Միացեալ Նահանգս Ամերիկիոյ :

ՍԿԾՆԾԿ ԲԱՆԱՍԵՐ

